«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 01.06.2018թ. ժամը 17:00

Համաձայն 17.05.2018թ-ի և 18.05.2018թ-ի քաղաքացի Արայիկ Պետրոսյանից,«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 18.05.2018թ-ին ստացված դիմում-բողոքները,քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմում-բողոքներում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Հունիսի 01-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝քաղաքացի Արայիկ Պետրոսյանը
Քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Քքաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանը:

Դիմումատու՝ քաղաքացի Արայիկ Պետրոսյանը պատշաճ ծանուցված և տեղյակ լինելով հանձնաժողովի նիստի,տեղի և ժամանակի մասին,նիստին չէր ներկայացել,նախորոք 16.00-ին զանգահարելով հանձնաժողովի նախագահի հեռախոսահամարին և հայտնելով որ վատառողջ է և նիստին չի կարող մասնակցել,տեղեկացրել է նաև որ դեմ չէ նիստը իր բացակայությամբ անցկացնելուն գրավոր առարկություններ կամ դիմումին կից լրացուցիչ փաստաթղթեր,հանձնաժողովին չունի ներկայացնելու:Հաշվի առնելով այդ հանգամանքը, նիստը անցկացվեց առանց դիմումատուի:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ
Քաղաքացի Արայիկ Պետրոսյանից 17.05.2018թ-ին և 18.05.2018թ-ին, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 18.05.2018թ-ին ստացված դիմում-բողոքները քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմում-բողոք ներում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և քննության հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, քաղաքացի Արայիկ Պետրոսյանից 17.05.2018թ-ին և 18.05.2018թ-ին, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 18.05.2018թ-ին ստացված դիմում-բողոքները քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի

սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի վերաբերյալ և հանձնաժողովին հայտնեց որ 24.05.2018թ-ին ստացվել է նաև նույնաբովանդակ դիմում-բողոք արդեն նաև դատարանին ուղղված և ներկայացրեց դիմումները և կից փաստաթղթերը,խնդրելով ծանոթանալ և հայտնել կարծիք առանց դիմումատուի հանձնաժողովի նիստը շարունակելու վերաբերյալ:

Հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և հայտնեցին կարծիք,որ դիմումատուն պատշաճ ծանուցված են եղել հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ,դրա վերաբերյա փաստում է նաև նրա հեռախոսազանգը,իսկ նրա բացակայությունը կարելի է դիտել հանձնաժողովին,բացի իր գրավոր դիմումներում առծածված փաստերից,այլ փաստեր չլինելու հանգամանք և ավելացնելու բան չունենալու ապացույց,ուստի նրա բացակայությունը կարելի է ընդունել որպես իր կարծիքը արտահայտող դիրքորոշում,ուստի բոլորը միակարծիք էին,որ նիստը կարելի է անցկացնել դիմումատուի բացակայությամբ:

Հանձնաժողովի նախագահն կարծիք հարցրեց նաև քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանից,առանց դիմումատուի նիստը անցկացնելու վերաբերյալ:Կառավարիչը հայտնեց այն կարծիքը,որ գերադասելի էր,որ դիմումատուն ներկա գտնվեր և անձամբ փաստեր այն հանգամանքները որոնք մատնանշել է, բայց իր կարծիքով նա դիմում նշվածից բացի այլ բան չունի հայտնելու հանձնաժողովին և եթե նրա բացակայությունը չի խանգարում հանձնաժողովի անդամներին եզրակացության գալու համար, ուստի ինքը նույնպես չի առարկում հանձնաժողովի նիստը առանց դիմումատուի անցկացնելու կարծիքին:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի նկատմամբ «Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Քաղաքացի Արայիկ Պետրոսյանից 17.05.2018թ-ին և 18.05.2018թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 18.05.2018թ-ին ստացված դիմում-բողոքների հիմքով քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմում-բողոքները և կից ներկայացված փաստաթղթերը,առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները, քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը, առաջարկեց լսել ներկա գտնվող քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Թոռչյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստարկները:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց, քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանին,ով մասնավորապես նշեց,որ քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության

դատարանի վճռով ճանաչվել է սնանկ,նույն դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել՝ Հովհաննես Թոռչյանի,որից անմիջապես հետո սնանկության գործով կառավարիչը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների և լիազորությունների կատարմանը, որի հետևանքով գույքագրվել գնահատվել է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը այդ թվում 2 տրանսպորտային միջոցները/մարդատար ավտոմեքենաներ՝ Մազդա CX 9 3.7L,2013թ-ի արտադրության և Մազդա 6 2.5L մակնիշի, 2014թ-ի արտադրության/ Պարտատերերի պահանջների բավարարման նպատակով գույքագրված և գնահատված գույքի իրացման համար կազմակերպվել և իրականացվել են աճուրդ և կրկնաճուրդ:Հերթական կրկնաճուրդը հայտարարվել է 18.05.2018թ-ին ժամը 11-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարաի՝ք.Երևան.Թբիլիսյան խճ.3/9 նստավայրում:

Սակարկությունների նախորդ օրը ստացել եմ զանգ դիմումատուից և տեղեկացել եմ,որ քաղաքացին փորձել է հայտեր ներկայացնել դատարան բայց չի կարողացել կատարել սահմանված վճարումները,հայտարարության տեքստում հատուկ հաշվի բանկային տվյալների բացակայության պատճառով,խոստացել եմ քաղաքացուն տրամադրել նրան բանկային տվյալները բայց քանի որ այդ պահին հեռու էի և արագ գրասենյակ հասնել չէի կարող,նրան հաշվի համարը չի տրամադրվել,որի մասին զրուցել եմ քաղաքացու հետ նույն օրը արդեն երեկոյան և խոստացել եմ առավոտյան կանուխ կարճ հաղորդագրության միջոցով,որը և ատավոտյան ուղարկել եմ քաղաքացուն:Աճուրդի օրը վատառողջ լինելու պատճառով չեմ կարողացել ներկայանալ աճուրդին,որի պատճառով աճուրդը չի կայացել և չի քննարկվել ոչ մի հայտ,չնայած դրանց առկայությանը,իսկ վատառողջ լինելու և աճուրդին չներկայանալու մասին հեռախոսով հայտնել եմ հայտատուներին և հայցել եմ նրանց ներողամտությունը:

Որպեսզի իրացումը իրականանա չկայացած կրկնաճուրդի փոխարեն,նույն գնային առաջարկով 22.05.2018թ-ին հայտարարել եմ նույն երկու լոտերի համար 08.06.2018թ-ին կայանալիք, կրկնաճուրդ,որի ժամանակ էլ գնորդը կարող է իրականացնի իր մասնակցության ցանկությունը:

Բացի դրանից դիմումատուին տեղյակ պահելով նոր աճուրդի տեղի և ժամի մասին,հայտնել եմ նաև որ ինքը պետք է նոր հայտ ներկայացնի դատարան և որ նա կարող է իր վճարած մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորագրերի բնօրինակները ստանա իրենից դատարան ներկայացվեղ հայտին կցելու համար:Նշեմ նաև որ քաղաքացու հետ բոլոր հեռախոսազրույցները տեղի են ունեցել գործնական մթնոլորտում,կոռեկտության բոլոր կանոնների պահպանմամբ և ավելորդ ոչ մի արտահայտություն թույլ չի տրվել կառավարչի կողմից,որից կարող էր վիրավորվել կամ վատ զգար քաղաքացին:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հարց ուղղեց կառավրչին առ այն,թե ինչ պատճառով բանկային տվյալները,մասնավորապես հատուկ հաշվի համարը չի տպվել հայտարարության մեջ և ինչու քաղաքացու պահանջից հետո տվյալ բոպեյին չի տրամադրվել հաշվի համարը, արդյոք այն առկա էր և չի բացվել հաջորդ օրը:Կառավարիչը պատասխանեց որ հատուկ հաշիվը բացված է եղել մինչև աճուրդի հայտարարումը,իսկ այդ բոպեյին չի տրամադրվել քանի որ ինչպես նշվեց՝ ինքը այդ պահին հեռու էր և արագ գրասենյակ հասնել չէր կարող,որպեսզի տրամադրի հաշվի համարը,իսկ հայտարարության մեջ չի նշվել ընդհամենը տպագրական սխալի հետևանքով,որը հետագայում ուղղվել է:

Հանձնաժողովի անդամ՝Մ.Մարտիկյանը հարց ուղղեց կառավարչին,թե չկայացած աճուրդին քանի հայտ է եղել և մնացած հայտատուները ինչպես են վճարել սահմանված վճարները:

Կառավարիչը պատասխանեց,որ եղել են ամեն գույքի համար երկու հայտ,որից երկու հայտերի համար վճարվել է բանկի միջոցով/տվյալ դիմումատուն/,իսկ մնացած երկու հայտատուները վճարումները կատարել են դրամարկղի միջոցով,կանխիկ կարգով:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը նույնպես հարց ուղղեց կառավարչին թե արդյոք կառավարիչը ճանաչում է աճուրդի մասնակիցներին և ունի անձնական շահագրգռվածություն այդ ապրանքատեսակնին այդ երկու հայտատուների իրացնելու մեջ:

Կառավարիչը պատասխանեց,որ այդ երկու հայտատուների հետ ծանոթացել է գույքի ուսումնասիրությունների ընթացքում,իսկ իր շահագրգռվածությունը միայն գույքերը իրացնելու մեջ է և այն էլ ինչքան հնարավոր է բարձր գնով,որից էլ ուղիղ համեմատական կարգով կախված է իր վարձատրությունը,իսկ գնորդների հարցում,որևե շահագրգռվածություն կամ նախընտրանք չունի և չի ունեցել,որում կարող են համոզվել բոլորը, հայտատրարված աճուրդի օրը աճուրդին

ներկա գտնվելով և եթե կհաղթի դիմումատուն ապա նա էլ կգնի ավտոմեքենաները և ինքը անձամբ կշնորհավորի գնորդին,ով էլ ուզում է նա լինի:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյանը նույնպես հարց ուղղեց կառավարչին թե արդյոք եթե ինքը վատառողջ չլիներ և աճուրդին ներկայանար պիտի քննարկեր բողոքաբերի հայտը:

Կառավարիչը պատասխանեց,որ ինքը չի ուսումնասիրել հայտը,իսկ փաստը այն էր որ աճուրդը չի կայացել և ոչ մի հայտ էլ չի քննարկվել,բոլոր ներկայացված հայտերը կքննարկվեն հայտարարարված աճուրդի օրը,առանց որևե խտրականության:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը,մասնավորապես հանձնաժողովի անդամ Ա.Աղամյանը հայտնեց այն կարծիքը, որ ներկայացված դիմումում նշված փաստերի և կառավարչի կողմից ներկայացված բացատրությունների համադրումից պարզ է,որ դիմումատուն տեղյակ է սնանկության վարույթից,կառավարչի իրավունքներից և պարտականություններից ու աճուրդների իրականացման կարգերից,իր կարծիքով կառավարիչը իր պարտականությունների կատարման մեջ թերացել է առ այն,որ չի ապահովվել անհրաժեշտ տեղեկատվություն աճուրդի անցկացման համար հանձինս նրան,որ սահմանված ժամկետում քաղաքացուն չի տրամադրել հաշվարկային հաշիվը վճարումներ կատարելու համար,որը բերել է նրան,որ քաղաքացին սահմանված ժամկետից ուշ է ներկայացրել աճուրդի մասնակցության հայտը և եթե աճուրդը կայանար ապա դիմումատուի ներկայացրած հայտը քննարկման ենթակա չէր լինի,որը կբերեր նրա իրավունքների իրացման խախտմանը այսինքն կառավարչի գործողությունները կարող էին վնաս հասցնել քաղաքացուն,որը և տպավորություն է ստեղծել դիմումատուի մոտ որ կառավարչի գործողություններում կա չարամտություն,որը կայանում է իրեն աճուրդի չթուլատրելու մեջ:

Հանձնաժողովի անդամը արտահատվեց նաև որ նման գործելաոճը Հ.Թոռչյանի մոտ առաջին անգամ է նկատվում և ինքը ապացույցներ չգտավ այն փաստին,որ դա կառավարչի կողմից կատարվել է պլանավորված և այն փաստը,որ կառավարիչը աճուրդը չի իրականացրել,չնայած այլ հայտերի առկայությանը ապացուցում է,որ կառավրչի գործողությունները կրել են չպլանավորված բնույթ և իրենց մեջ միտում չեն պարունակել որևե մեկի շահերի ոտնահարման,կամ վնաս հասցնելու:Ա.Աղամյանը նշեց նաև,որ այնուամենայնիվ կառավարչի գործողություններում կան խախտումներ որոնց պահպանման դեպքում կարելի կլիներ խուսափել այսպիսի իրավիճակներից:Կառավարչը իր գործողությունները չի կատարել բարեխղճորեն և արդյունավետ,որի պատճառով ստացվել է,որ կառավարիչը չի նպաստել սնանկության վարույթում աճուրդի իրականացմանը և չի ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն,որը հարիր չէ սնանկության գործով կառավարիչների անվանը և չի նպաստում կատավաչների անվան բարձրացմանը:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում պարտապանի գույքի կազմում ներառված գույքը իրացվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն այն է.

-Պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի *'Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը,* 1-ին մասի *'Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները,* 8-րդ կետով՝ *կազմակերպիչի կողմից սահմանված նախավճարի չափը,ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները:*

Տվյալ դեպքում աճուրդի կազմակերպիչ է հանդիսացել սնանկության գործով կառավարիչը և նա իր հայտարարությամբ ապահովել է օրենքի նվազագույն պահանջը,այսինքն հայտարարությամբ նշել է որ վճարումները կարող են կատարել՝**կանխիկ կամ փոխանցումով**:Բայց պետք է նշվի որ բացմաթիվ տարիների ընթացքում ձևավորված գործելաոճի համապատասխան բացի օրենքի նվազագույն պահանջները ապահովելը,կառավարիչների կողմից հայտարարություններում նշվում է նաև հատուկ հաշվի վավերապայմանները,այդ թվում նաև բանկը և հաշվի համարը,որը արդեն դարձել է ընդհանուր, առավել արդյունավետ գործելաոճ:Բացի դրանից «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա»ԻԿ-ի դիտորդ խորհուրդը իր 05.06.2017թ-ի խորհրդի նիստում քննարկել և հաստատել է՝սնանկության գործով կառավարիչների կողմից աճուրդների անցկացման Կանոնակարգը,որի 1-ին հոդվածի *'Աճուրդի մասին հաղորդագրության մեջ նշվում է -ե/սնանկության հատուկ հաշվի վավերապայմանները,որտեղ պետք է մուծվի աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը:*

Այսինքն տվյալ դեպքում սնանկության գործով կառավարիչ՝Հ.Թոռչյանը պետք է ուղղորդվեր նշված Կանոնակարգով,որը տեղի չի ունեցել,որը և բերել է այս իրավիճակին,որը և կարող էր դառնալ պատճառ քաղաքացու շահերի ոտնահարման և հնարավոր վնասի պատճառման:

Հանձնաժողովի նախագահն անդրադարձավ նաև հատուկ հաշվի տրամադրման դիմում նշված փաստերին և այդ մասին կառավարչի տված բացատրություններին և մասնավորապես նշեց,որ իր կարծիքով երբ կառավարչի կողմից հաշվի համարը հայտարարությամբ չի նշվել և գնորդ քաղաքացին մատնանշելով այդ փաստը,ցանկություն է հայտնում և խնդրում է իրեն տրամադրել հաշվի համարը և բանկը վճարումներ կատարելու համար,կառավարիչը պետք է անհապաղ այդ պահանջը կատարեր և ստեղծեր բոլոր հնարավորությունները,որպեսզի պոտենցիալ աճուրդի մասնակիցը իրացնի օրենքով սահմանված իր իրավունքները,իսկ այս դեպքում կառավարչի կողմից դա չի կատարվել,դեռ ավելին հաշվի համարը և բանկը տրամադրվել է հաջորդ օրը միայն երբ դա արդեն ուշ էր և քաղաքացին վճարումները կատարել է ուշացումով,որը աճուրդը կայանալու դեպքում կարող է պրոբլեմներ առաջացնել քաղաքացու աճուրդին մասնակցելու իրավունքի իրացման համար:

Հանձնաժողովի նախահն համաձայնեց այն մտքին որ քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Թոռչյանի կողմից դրսևորված անգործությունը չի բխում սնանկության վարույթի հանդեպ վստահության ամրապնդմանը,այլ ընդհակառակը նա իր գործողություններով խաթարել է տարիներ ի վեր,մնացած սնանկության գործերով կառավարիչների,ստեղծված գործարար համբավը և վստահությունը:

Հանձնաժողովի անդամներ Հ.Մարտիկյանը և Հ.Գևորգյանը արտահայտեցին իրենց կարծիքը առ այն,որ կառավարչը իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ չներկայացրեց պատճառաբանված և հիմնավորված բացատրություններ,այդ թվում այս պահին չներկայացվեց աճուրդի չկայացման պատճառաբանված արձանագրությունը,որին կից պետք է լիներ իր վատառողջ լինելու և աճուրդին մասնակցելու հնարավորություն չունենալու վերաբերյալ ապացույցը,որ կառաջարկեին ներկայացնել հանձնաժողովին կամ խորհրդին,քանի որ իրենց կարծիքով կառավարչի կողմից հայտարարված աճուրդին չմասնակցելը պետք է տեղի ունենա բացառիկ դեպքերում և դրա վերաբերյալ կառավարիչը պետք է ունենա լուրջ և հիմնավորված պատճառներ և միայն հայտարարել թե ինքը եղել է վատառողջ և աճուրդին չի ներկայացել ու աճուրդը ճանաչվել է չկայացած,դա բավար չէ և իր հետևից կարող է բերել իրավական հետևանքներ և դառնա արատավոր պրակտիկա:

Հանջնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հարցրեց հանձնաժողովի անդամներին ըստ էության կարծիքների քննարկմանը ավելացնելու վերաբերյալ և ստանալով բացասական պատասխան եզրափակեց քննարկումը,առաջարկելով քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Թոռչյանի գործողություններին կամ հիմնականում անգործության վերաբերյալ փաստերի քննարկումներից պարզվում է որ սնանկության գործով կառավարչի գործողություններում առկա են ձևավորված առկա արդյունավետ ընդհանուր գործելաոճի և «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա»ԻԿ-ի դիտորդ խորհուրդի 05.06.2017թ-ի նիստում հաստատված՝սնանկության գործով կառավարիչների կողմից աճուրդների անցկացման Կանոնակարգի,1-ին հոդվածի խախտում,որի հետևանքով կառավարչի հետագա գործողությունները հանգեցրել են հայտարարված աճուրդի չկայացմանը և քաղաքացիների աճուրդներին մասնակցելու իրավունքների չիրացմանը,որը իր հերթին չի բխում սնանկության վարույթի հանդեպ վստահության ամրապնդման՝ սնանկության գործով կառավարչի պարտականություններից:Վերոգրյալի հիմքով առաջարկեց հարուցված կարգապահական վարույթ շրջանակներում «ՍԳԿԿ»ԻԿԿ «Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանին բանավոր նկատողություն և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 15-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝
1. Քաղաքացի Արայիկ Պետրոսյանից 17.05.2018թ-ին և 18.05.2018թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 18.05.2018թ-ին ստացված դիմում-բողոքների հիմքով քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի գործողությունների /անգործության/, սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակար գերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով միջնորդել «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորդ Խորհրդին՝«Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել քաղաքացի Վահե Ալբերտի Շահինյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանին բանավոր նկատողություն և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու 15-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան